ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/03

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Է. Փոթոյանի (Իրավաբանական անձանց պետական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 273.110.1085248)

ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ՝

Հ. Մնացականյանի (լիազորագիր, տրված՝ 01.02.2020թ.)

քննելով ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/5» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 10.01.2020թ. ներկայացված (10.01.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/03 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն 10.01.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարությունն (հետայսու նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/5» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ բաց մրցույթի հայտը պատրաստելու հրահանգի 7-րդ կետում, հայտի ապահովում բաժնում հստակ նշվել է. մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Սա այն դեպքում, երբ հրավերում նշված է, որ ընթացակարգը հայտարարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:

Պատվիրատուին ներկայացված պարզաբանման պահանջին՝ «Հարգելի ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/5 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողով: ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/5 մրցույթի 24-րդ չափաբաժինը կարող է ունենալ 140-ից 150 մլն ՀՀ դրամ արժեք: Հնարավոր է արդյոք դիտարկել տվյալ չափաբաժնի համար բանկային երաշխիքի փոխարեն տուժանքի համաձայնության ներկայացումը, ինչպես դա արվեց «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/2 ընթացակարգի համար»:

Ի պատասխան՝ Պատվիրատուն նշել է, որ

«Հարգելի Մասնակից հաշվի առնելով, որ գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան, ուստի Դուք կարող եք որպես հայտի ապահովում ներկայացնել տուժանքի համաձայնություն»:

Այսինքն՝ Պատվիրատուն ակնհայտ կերպով կատարում է փոփոխություն Ընթացակարգի հրավերում, առանց հայտերի ներկայացման վերջնաժամկետի փոփոխության/ երկարաձգման:

Սույն պարզաբանման տրամադրմամբ և անգործության պատճառով Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 29-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերը:

Այսինքն՝ Պատվիրատուն փաստացի կատարել է հրավերի փոփոխություն, սակայն փոփոխություն կատարելու վերաբերյալ հայտարարություն չի հրապարակել տեղեկագրում և չի կատարել հայտերի ներկայացման վերջնաժամկետի փոփոխություն:

Պատվիրատուի նման գործողությունները կամ անգործությունը հանգեցնում է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ Պարտավորեցնել պատվիրատուին հրավերում կատարել պահանջված փոփոխությունները համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և իրականացնել հայտերի ներկայացման վերջնաժամկետի փոփոխություն:

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.01.2020թ. ժամը 11:25-ին և 03.02.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 03.02.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.01.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտարարվել է 2020 թվականի պետության կարիքների համար անհրաժեշտ դեղերի մրցույթը: Ազգաբնակչությանը դեղապահովման անընդհատությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով ժամկետի սղությունը (առնվազն 40 օրացուցային որով

երկարաձգելը), Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել հայտի ապահովումը նաև տուժանքի համաձայնությամբ ներկայացնելու պահանջը մասնակիցներին տեղեկացնել ոչ ավտոմատ ծանուցմամբ: Ծանուցման մասին հնարավոր մասնակիցները տեղեկացվել են, որի մասին վկայում է վերջիններիս ակտիվ մասնակցությունը՝ թվով 8 մասնակից: Հետևաբար բողոքաբերի այն հայտարարությունը, թե Առողջապահության նախարարության գործողությունները խոչընդոտում են մասնակիցների մասնակցությանը՝ անհիմն է:

Պատվիրատուն հայտնել է, որ բողոքաբերի բողոքը հիմնավոր չէ և Պատվիրատուի կողմից չի ընդունվում, քանի որ Ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն, ընդ որում՝ վերջինս բանկի կողմից հաստատված երաշխիքի փոխարեն հայտով ներկայացվել է տնօրենի կողմից հաստատված երաշխիք, որը համարժեք է տուժանքի համաձայնությանը: Այսպիսով՝ Ընթացակարգի գործողությունները՝ բողոքարկելը և Պատվիրատուի պայմաններով գնման ընթացակարգին հայտ ներկայացնելը, իրարամերժ են:

ՀՀ առողջապահության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.01.2020թ. ժամը 11:25-ին և 03.02.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 03.02.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ առողջապահության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/5» ծածկագրով բաց մրցույթ:

2. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 10.01.2020թ. ներկայացված բողոքը, ՀՀ առողջապահության նախարարության 16.01.2020թ. գրությունը, «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/5» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ .

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ

կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Այսպիսով՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/5» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Այս տեսանկյունից Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ **<u>եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում,</u>** իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես **<u>հայտի,</u>** այնպես էլ պայմանագրի **<u>ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:</u>**

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների

բազային միավորի տասնապատիկը, և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է այն դեպքերը, որոնց պարագայում մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում: Ընդ որում՝ նույն կետով սահմանվում է հայտի ապահովման ձևերը, այն է՝ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Տվյալ դեպքում՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարզաբանումով հայտնել է, որ հայտի ապահովումը կարող է ներկայացվել նաև միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի հրավերում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություն և նախատեսել նաև գնահատող հանձնաժողովի կողմից պարզաբանումով նշված դրույթը, այն մասին, որ հայտի ապահովումը կարող է ներկայացվել նաև միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Այս տեսանկյունից գտնում եմ, որ Ընկերության նման պահանջը հիմնավոր չէ, քանի որ Ընթացակարգի հրավերում չի կարող նախատեսվել մի դրույթ, որը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից: Մասնավորապես՝ Կարգով հստակ սահմանված են հայտի ապահովման ներկայացման ձևերը (բանկային երաշխիք կամ կանխիկ փող), ուստի հրավերում չի կարող նախատեսվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով հայտի ապահովում ներկայացնելու վերաբերյալ դրույթ: Ընդ որում՝ Կարգը հստակ սահմանում է նաև որպես ապահովում տուժանքը ներկայացնելու դեպքերը, որոնք վերաբերում են միայն պայմանագրի և որակավորման ապահովմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանումով ամրագրվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանող դրույթ, որը չի կարող ամրագրվել ընթացակարգի հրավերում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 10.01.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**